



ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1, հեռ. (+374 11) 514 200, ֆաքս (+374 11) 514 004, էլ. փոստ՝ mayor@yerevan.am

№ 01/07-470214

« 05 » 06 2019թ.

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ
ՊԱՐՈՆ Ս. ՊԱՊԻՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Պապիկյան,

ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարի 27.05.2019թ. հ. 02/16.4/24590-2019 գրությամբ ներկայացրած «Գումար հատկացնելու, Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեում վերաբաշխում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N1515-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի կապակցությամբ հայտնում եմ հետևյալը.

ՀՀ կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի N551 որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետությունում պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգի 3-րդ կետի համաձայն՝ հուշարձանի իրականացման վերաբերյալ առաջարկությունը նախապես համաձայնեցվում է պետական և հասարակական նշանավոր գործչի կամ նրա առաջին հերթի ժառանգների ու համապատասխան համայնքի ավագանու հետ և Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի միջոցով ներկայացվում տվյալ գործչի գործունեության ոլորտի համապատասխան պետական կառավարման հանրապետական մարմին, որը Հայաստանի Հանրապետության համապատասխան մարզպետին է ներկայացնում գործչին նվիրված հուշարձանի իրականացման վերաբերյալ առաջարկություն՝ նշելով հուշարձանի տեսակը, տեղադրման վայրը, պատվիրատուին և ֆինանսավորման աղբյուրների մասին:

Շարադրվածից հետևում է, որ արձանի տեղադրման համաձայնության տրամադրման հարցը պետք է ներկայացվի Երևան քաղաքի ավագանու քննարկմանը:

Հարգանքով՝

Իրավաբանական վարչություն
կատ.Ա.Մուրադյան, Կ.Դանիելյան, հեռ.011-514-175

ՀԱՅԿ ՄԱՐՈՒԹՅԱՆ

